ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ՝ 03.07.2013 ԹՎԱԿԱՆԻ N *«112760054 S4002»*
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան **«03» «04» 2017թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, ի դեմս լիազորված անձ Գառնիկ Տիտանյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 03.07.2013թ. N ***«112760054 S4002»*** պայմանագրի 6.4 կետը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 03.07.2013թ. N *«ԱՍՀՆ-ՇՀԱՊՁԲ-17/1-Ա»* պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.2 Սահմանել մատուցվող հեռախոսակապի ծառայությունների նոր սակագներ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, Համաձայնագրով հաստատված N 1 Հավելվածը՝ 1 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը և սույն Համաձայնագրով հաստատված Հավելվածը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«ԱրմենՏել» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական շենք N 3	Հասցե՝ ք. Երևան, Ահարոնյան 2
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկի անվանումը՝ Հայէկոնոմբանկ
h/h 900011016988	h/h 900011077048
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 02500052
Աշխատակազմի ղեկավար _____ **Ա. Գրիգորյան**	**Լիազորված անձ** ----------**Գ.Տիտանյան**
Կ.Տ.	Կ.Տ.

BAN 112760054 պայմանագրի Հավելված 1

հ/հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	Սակագինը (առանց ԱԱՀ)	ԱԱՀ	Սակագինը (ներառյալ ԱԱՀ)
1	Հեռախոսագծի բաժանորդային վճար (յուրաքանչյուր հեռախոսահամարի համար)	դրամ	2083,33	416,67	2500
2	Միացման միանվագ վճար (յուրաքանչյուր հեռախոսահամարի համար)	դրամ/ամիս	1250	250	1500
3	Ամսական տրամադրվող անվճար ներցանցային (տեղական և միջքաղաքային) ելքային զանգերի չափաքանակ (յուրաքանչյուր հեռախոսահամարի համար)	րոպե/ամիս	360		
4	Տեղական և միջքաղաքային ներցանցային ելքային զանգեր՝սկսած 361-րդ րոպեից	դրամ/րոպե	4.17	0.834	5
5	Ելքային զանգեր դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցեր	դրամ/րոպե	4.17	0.834	5
6	Ելքային զանգեր դեպի Հայաստանի Հանրապետության այլ օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված ցանցեր	դրամ/րոպե	4.17	0.834	5
7	Ելքային զանգեր դեպի Հայաստանի Հանրապետության հանրային շարժական բջջային կապի ցանցեր	դրամ/րոպե	20	4	24
8	Ելքային զանգեր դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային շարժական բջջային կապի ցանցեր	դրամ/րոպե	23,33	4,67	28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIA TELEPHONE COMPANY
02500052
"ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵԼԵՖՈՆԱՅԻՆ ԿՈՄՊԱՆԻ"
"ARMENIA TELEPHONE COMPANY"